Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
հաշվիչ հանձնաժողովի

**ՈՐՈՇՈՒՄ N Լ-1-Ա**

**««ՓԱՍՏԱԲԱՆԻ ՕՐ» ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑՈՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

12.02.2017թ. ք.Երևան

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) հաշվիչ հանձնաժողովը,

հիմք ընդունելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 9.1 հոդվածի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 7.11 կետի և 15.25 կետի 7-րդ ենթակետի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի 2013 թվականի փետրվարի 22-ի № 5/1-Լ որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի քվեարկության արդյունքների ամփոփման կարգի» 33-րդ կետի 7-րդ ենթակետի պահանջները,

հաշվի առնելով 11.02.2017թ. տեղի ունեցած ««Փաստաբանի օր» սահմանելու հարցը քննարկելու մասին» օրակարգային հարցով քվեարկության արդյունքների ամփոփման մասին Պալատի հաշվիչ հանձնաժողովի 11.02.2017թ. թիվ 2-Լ արձանագրությունը,

ՈՐՈՇԵՑ՝

1. ««Փաստաբանի օր» սահմանելու հարցը քննարկելու մասին» օրակարգային հարցով քվեարկությունը ճանաչել չկայացած, քանի որ «Փաստաբանի օր» սահմանելու համար անհրաժեշտ **«Կողմ»** քվեարկած ձայների քանակ չի ապահովվել:

   *Կողմ՝ 8 (ութը) ձայն,*
   *Դեմ՝ 1 (մեկ) ձայն*
   *Ձեռնպահ՝ 0 (զրո) ձայն*

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից:

*Հաշվիչ հանձնաժողովի նախագահ՝* *Ապետնակ Պողոսյան*

*Հաշվիչ հանձնաժողովի քարտուղար՝* *Մարինե Ֆարմանյան*

*Անդամներ՝* *Աշոտ Խլղյան*

*Մարիաննա Մխիթարյան*

*Արսեն Հարությունյան*

*Աղավնի Մադոյան*

*Զարուհի Հայրապետյան*

*Տիգրան Սարուխանյան*

*Տիգրան Հայրապետյան*